

- 21 Յետ սակաւու պապս ծերունի,
 Ի վանս տեղւոյն որ Արղընի,
 Բարձրահայեաց Աստուածածնի,
 Ի հանդերձեալն անդրափոխի:
- 22 Ապա չըւեալ Աբրահամու,
 Երթայր ի շէն Կոստանդընու,
 Ուր յանուն իւր յետկար առնու,
 Առ հովուել զիմ Ամգայ ածու:
- 23 Յայնրմ վայրի, զառաղաշեան.
 Աղէքսանդրր որ Բիւզանդեան,
 Կաթուղիկոսն Արարատեան,
 Չըւէր անտի առ վայրն իջման:
- 24 Ուր եւ ընդ իւր տանէր անգամ,
 Եւրոպիոյ քաղաք յայնժամ,
 Ըղքեռիս իմ Տէր Աբրահամ,
 Չերթ ուղեկից եւ բարեկամ:
- 25 Անտի քեռիս զատ ի վեհէն,
 ՅԱմիթ քաղաք դարձեալ անդրէն,
 Պատուիւր յողջոյն իւրմէ հօտէն,
 Քաջ եւ հըսկօղ հովուի զօրէն:
- 26 Դա զի համեստ մայր իմ Մարթա,
 Թողեալ յաստիս զիս եօթնամեայ,
 Փոխեալ էր առ կեանս մըշտակայ,
 Չարգանայի առ քեռս ապա:
- 27 Եւ մինչ էի իբր եօթնամեան,
 Վարժեալ փոքր ինչ յրնթերցարան,
 Բընակէի ես յօթարան,
 Աբրահամու քեռւոյս արժան: